

4.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА
----	---

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀՏԴ 336.1:352

DOI: 10.56246/18294480-2024.16-142

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ s.amirkhanyan@gsu.am

ՍԱՐԳՍՅԱՆ ԱԼԼԱ

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
«Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» բաժնի
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
Էլփոստ՝ a.sargsyan@gsu.am

Արդի պայմաններում հանրային կառավարումը երկրներում տեղի է ունենում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի միջոցով, ընդ որում տեղական ինքնակառավարման համակարգը պետական կառավարման բաղադրիչ մաս է կազմում: Նկատելի է նաև, որ այս համատեքստում նշանակալիության առավել բարձր մակարդակ է ձեռք բերում տեղական ինքնակառավարման համակարգը, որը միաժամանակ նպաստում է պետության՝ որպես ընդհանուր և միասնական կառույցի լիազորությունների լիակատար իրացմանը, ինչպես նաև ունենալով որոշակի ինքնուրույնություն և մոտ գտնվելով անմիջապես կոնկրետ համայնքի առանձնահատուկ խնդիրներին՝ հնարավորություն է ստանում ավելի արագ ու արդյունավետ արձագանքելու վերջիններս:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան՝ ՏԻՄ-երին ամրագրված են մի շարք լիազորություններ, որոնց կատարումը ենթադրում է առաջնային փուլում ֆինանսական միջոցների առկայություն, այնուհետև դրանց նպատակային օգտագործում և

արդյունքների գնահատում: Ինչ վերաբերում է համայնքների ֆինանսական մուրքերի և ելքերի գնահատմանը, վերջինս առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում հատկապես համայնքների խոշորացման համապեքսում: Նկատենք նաև, որ համայնքների խոշորացման հիմնական դրդապատճառներից մեկն է եղել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքներում առավել խոշոր ծրագրերի իրականացումը, որոնք էլ իրենց հերթին պետք է նպաստեն համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հետևաբար խոշորացման գործընթացի համապարփակ գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ է դիտարկել համայնքների եկամուտների ձևավորման աղբյուրները, ծախսային հիմնական ուղղությունները, ինչպես նաև վերջիններիս տնտեսկարար կշիռներում արժանագրված կառուցվածքային փոփոխությունները մինչխոշորացումը և դրանից հետո: Հետազոտության օբյեկտը վարչատարածքային բարեփոխումների իրականացումն է Գավառ համայնքում, իսկ առարկան՝ համայնքի բյուջեի բաղադրիչ տարրերի ֆինանսական վերլուծությունը, սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտների վերհանումը և առկա միտումները:

Բանալի բառեր՝ վարչատարածքային բարեփոխումներ, տեղական ինքնակառավարում, համայնքային բյուջե, սեփական եկամուտներ, լիազորությունների իրացում:


Վարչատարածքային բարեփոխումների իրականացման վերաբերյալ առկա են տարբեր հեղինակների հետազոտություններ, որոնք հանրությանն են ներկայացվել դեռևս 2000-ական թվականներից սկսած: Մասնավորապես 2004 թվականին համայնքների խոշորացման անհրաժեշտության մասին անդրադարձ է կատարվել Սամվել Ամիրխանյանի կողմից «Բյուջետային գործընթացի կատարելագործման ուղղությունները համայնքներում /ՀՀ Գեղարքունիքի մարզի օրինակով/» աշխատանքում, որտեղ ասվածը հիմնավորվել է Շվեդիայում և Էստոնիայում տեղի ունեցած խոշորացման գործընթացի դրական արդյունքներով: Հղում կատարելով աշխատանքին, նշենք, որ Շվեդիայում 1951-1999թթ. համայնքների թիվը 2498-ից կրճատվել է մինչև 289-ի, իսկ ինչ վերաբերում է համայնքների բնակիչների թվաքանակին, ամենափոքր համայնքն ունի 3000, իսկ

ամենամեծը՝ 700000 բնակիչ: Էստոնիայում 1890-1939թթ. համայնքների թիվը 1000-ից դարձավ 281¹:

Ինչպես գիտենք, ՀՀ-ում նույնպես տեղի է ունեցել համայնքների խոշորացում: Մեր հետազոտությունը ամբողջական դարձնելու նպատակով դիտարկենք Գավառ համայնքի օրինակը: Գավառ խոշորացված և բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա:

Այսպիսով, ներկայումս Գավառ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են Գավառ քաղաքը, Բերդկունք, Գանձակ, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Լճափ, Ծաղկաշեն, Ծովազարդ, Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս, Սարուխան գյուղերը: Համայնքի կենտրոնը Գավառ քաղաքն է²:

Ստորև դիտարկենք 2020-2022թթ. Գավառ համայնքի եկամուտների շարժընթացը: Նկատենք, որ 2020 և 2021 թվականների դեպքում տվյալների ներկայացումը ենթադրում է ըստ առանձին համայնքների հրապարակած համայնքային բյուջեների եկամուտների հանրագումարային ցուցանիշ՝



¹ Տե՛ս Ամիրխանյան Ս., Բյուջետային գործընթացի կատարելագործման ուղղությունները համայնքներում /ՀՀ Գեղարքունիքի մարզի օրինակով/, Երևան, 2004թ., էջ 38:

²Տե՛ս <https://gavarihamaynqapetaran.am/Pages/Home/default.aspx>

Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայքէջ:

**Գծապատկեր 1. 2020-2022թթ. Գավառ խոշորացված համայնքի
ընդամենը եկամուտների, այդ թվում սեփական եկամուտների
փաստացի շարժընթացը¹:**

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում, Գավառ խոշորացված համայնքի եկամուտները դիտարկվող ժամանակահատվածում ունեցել են աճի միտում, մասնավորապես 2021 թվականին նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 1,69 տոկոս, իսկ 2022 թվականին խոշորացման գործընթացի ավարտից հետո արձանագրված աճը կազմել է 19,45 տոկոսային նիշ կամ դրամային արտահայտությամբ շուրջ 391,5 մլն. դրամ: Նկատենք նաև, որ դիտարկված պարբերաշրջանում աճի միտումը պահպանվել է նաև ընդամենը եկամուտների կազմում սեփական եկամուտների տեսակարար կշռի դեպքում: Փաստացի խոշորացման արդյունքում Գավառ խոշորացված համայնքի եկամուտները շեշտակի աճել են, ինչը դրսևորվել է նաև պաշտոնական դրամաշնորհների հոդվածի դեպքում, որի միայն 75 տոկոսն է կազմել պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրված միջոցները: 2022 թվականին Գավառ համայնքի բյուջեի կազմում ֆոնդային մասի տեսակարար կշիռը եղել է 32,8 տոկոս, իսկ վարչական մասինը՝ 67,2 տոկոս: Ընդգծենք, որ նույն ցուցանիշը 2021 թվականին համապատասխանաբար կազմել է 20,7 և 79,3 տոկոսային նիշ: Հավելենք նաև, որ, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, մինչխոշորացումը Գավառ խոշորացված համայնքի կազմի նախկին շատ համայնքներ բյուջեի ֆոնդային մաս չեն ձևավորել, խոսքը վերաբերում է մասնավորապես Բերդկունք, Լճափ, Ծաղկաշեն նախկին համայնքներին:

Որպեսզի վերլուծությունը առավել համապարփակ լինի, ստորև ներկայացնենք նաև Գավառ խոշորացված համայնքի 2021 և 2022թթ. բյուջետային ծախսերի շարժընթացը՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման:


¹Տե՛ս <http://gegharkunik.mtad.am/community-budgetary-revenues/>

Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջ:

Աղյուսակ 5. 2021 և 2022թթ. Գավառ խոշորացված համայնքի փաստացի ծախսերը՝ ըստ ծախսերի տնտեսագիտական դասակարգման:

Ծախսերի անվանում	2021		2022	
	Գումար, մլն. դրամ	Տեսակարար կշիռ, %	Գումար, մլն. դրամ	Տեսակարար կշիռ, %
Ընդամենը ծախսեր	2061,6	100	2534,8	100
Ընթացիկ ծախսեր	1478,7	71,6	1502,3	59,3
Աշխատանքի վարձատրություն	445,1	21,6	328,3	12,9
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	282,6	13,7	184,5	7,3
Սուբսիդիաներ	666,4	32,3	875,7	34,6
Դրամաշնորհներ	21,7	1,0	71,4	2,8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	38,7	1,9	16,9	0,7
Այլ ծախսեր	24,2	1,1	25,5	1,0
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	667,1	32,3	1059,5	41,8
Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-84,3	-3,9	-27,1	-1,1

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 5-ում, Գավառ խոշորացված համայնքի ընդամենը փաստացի ծախսերը 2022 թվականին անցած տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 473,2 մլն դրամով: Նկատենք, որ 2022 թվականին համայնքի բյուջեի ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուրի կազմում նվազել է 12,3 տոկոսային նիշով: Շեշտակի նվազել է նաև աշխատանքի վարձատրության հոդվածի ցուցանիշը՝ 8,7 տոկոս կամ դրամային արտահայտությամբ 116,8 միլիոն դրամ: Գավառ համայնքի ընդամենը փաստացի ծախսերի կազմում 2022 թվականի ավարտի դրությամբ 9,5 տոկոսային նիշով աճ է արձանագրվել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հոդվածում: Ինչպես փաստում են պաշտոնական վիճակագրական տվյալները, խոշորացման արդյունքում համայնքի բյուջեի բաղադրիչների տեսակարար կշիռներում տեղի են ունեցել նկատելի փոփոխություններ, որոնց արդյունավետությունը գնահատելու համար ներկայացնենք նաև Գավառ համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման:



Գծապատկեր 2. 2022 թվականին Գավառ խոշորացված համայնքի բյուջեի փաստացի ծախսերի տեսակարար կշիռները՝ ըստ գործառական դասակարգման:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ում, 2022 թվականին Գավառ խոշորացված համայնքում, ըստ ծախսերի գործառական դասակարգման, սոցիալական պաշտպանություն, հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր, պաշտպանություն, հասարակական կարգ և անվտանգություն ոլորտներին ֆինանսական միջոցներ կա՛մ չեն հատկացվել, կա՛մ այնքան քիչ են հատկացվել, որ տեսակարար կշռում դրանք մինչև 0,4 տոկոսային նիշ են կազմում: Համաձայն ներկայացված տվյալների՝ առավելագույն միջոցներ հատկացվել է կրթության ոլորտին, մասնավորապես նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների իրականացմանը: Ըստ նվազման կարգի՝ 2-րդ տեղում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն են՝ 22 տոկոս և հանգիստ, մշակույթ, կրոն՝ 14 տոկոս:

**Աղյուսակ 7. Գավառ խոշորացված համայնքի ՈԻԹՀՍ
վերլուծությունը խոշորացման համապեքսսրում:**

Ուժեղ կողմեր ➤ Մասնագիտական որակյալ ներուժ, ➤ Ընդամենը եկամուտների կազմում սեփական եկամուտների ծավալային աճ, ➤ Սուբվենցիոն ծրագրերից օգտվելու՝ համայնքների հնարավորությունների մեծացում:	Թույլ կողմեր ✓ Բնակիչների հետաքրքրվածության և մասնակցային լինելու ցածր մակարդակ, ✓ Գործազրկության բարձր մակարդակ, աշխատատեղերի օպտիմալացում, ✓ Սոցիալ-տնտեսական թերի ենթակառուցվածքներ, ✓ Տեղական բյուջեների կախվածության բարձր մակարդակ պետական բյուջեից:
Հնարավորություններ • Աշխատուժի առկայություն, • Փոխառու միջոցների ներգրավման հնարավորություն, • Համայնքներում մեծամասշտաբ ծրագրերի իրականացման հնարավորություն, • Ենթակառուցվածքների բարելավում, • ՓՄՁ-համայնք արդյունավետ համագործակցային կապերի ստեղծում, ներդրումային գրավչության բարձրացում, • Պետական բյուջեին ամրակցված որոշ հարկատեսակներից լրացուցիչ մասհանումներ համայնքներին, • Երկարաժամկետ հեռանկարում օրենսդրական նոր փոփոխություններ, • Միջհամայնքային և միջքնակավայրային կապերի ստեղծում:	Սպառնալիքներ ✗ Համայնքի բնակիչների արտաքին միգրացիա, ինչպես նաև ուրբանիզացում Երևանում, ✗ Տեղական հարկերի գանձման գործընթացի խոչընդոտների առաջացում, ✗ Բազմաբնակավայր համայնքների բնակավայրերի անհամաչափ զարգացում, ✗ Պատերազմական և ետպատերազմական իրավիճակի մարտահրավերներ:

Ընդգծենք նաև, որ Գավառ համայնքում առկա է մասնագիտական որակյալ ներուժ, ինչի ապահովման գործում իր անուրանալի դերն է կատարում մարզում միակ բարձրագույն կրթական հաստատությունը՝ Գավառի պետական համալսարանը: Իր գործունեության 30 տարիների ընթացքում բուիը պատրաստել է մասնագետներ տարբեր ոլորտներում, և ներկայումս իրենց մասնագիտական փորձն ու ներուժը համայնքի զարգացման գործին են ծառայեցնում վերջինիս հարյուրավոր շրջանավարտները:

Այսպիսով, իրականացված վերլուծությունների հիման վրա արվում են հետևյալ առաջարկությունները՝

1. ՀՀԶԾ մշակման, ներկայացման և մշտադիտարկման իրականացման միասնական համակարգի ներդրում, այդ թվում օրենսդրական

կարգավորում, որպեսզի հնարավոր լինի առավելագույնս ճշգրիտ գնահատել վերջիններիս արդյունավետությունը, համադրելի դարձնել միևնույն համայնքի մի քանի պարբերաշրջանների, ինչպես նաև տարբեր համայնքների զարգացման ծրագրերը:

2. Միջբյուջետային փոխանցումների կազմում սուբվենցիաների տրամադրման ծավալային աճի ապահովում, քանի որ սուբվենցիաները համալրում են համայնքային բյուջեների ֆոնդային մասի եկամուտները, հետագայում ուղղվում են վերհանված հստակ խնդիրների լուծմանը, առավել վերահսկելի են, ինչպես նաև համայնքի շրջանակներում նոր արժեք են ստեղծում՝ շղթայաբար նպաստելով մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման:

3. Բնակիչ-SԻՄ համագործակցային կապի ամրապնդմանն ուղղված ծրագրերի իրականացում, որոնք կնպաստեն ՏԻ համակարգի հանդեպ բնակիչների վստահության մակարդակի բարձրացման, ինչպես նաև կշահադրդեն բնակիչներին արժևորել սեփական կարևորությունը համայնքի շրջանակներում՝ վերջնարդյունքում հանգեցնելով մասնակցայնության աճի:

4. Խոշորացման գործընթացը չհամարել ավարտված: Չնայած այն հանգամանքին, որ խոշորացման գործընթացը փաստացի օրենսդրորեն ներկա պահին ավարտված է և բազմաբնակավայր համայնքները ձևավորված են, առաջարկվում է ստեղծել անկախ փորձագետներից կազմված խումբ, որը մշտապես կհետևի ֆինանսական ցուցանիշների փոփոխության շարժընթացին, որի հիման վրա հանդես կգա նոր առաջարկություններով, քանի որ գործընթացը նոր է և, ըստ երևույթին, հնարավոր են առաջիկայում ցուցանիշների հիման վրա նոր վերակազմավորումներ համայնքների միջև:

Օգտագործված գրականության ցանկ

1. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, ՀՀ կառավարության արձանագրային որոշման 44 հավելված՝ ընդունված 2011 թվականի նոյեմբերի 10-ին:

2. ՀՀ Սահմանադրություն, ընդունված փոփոխություններով 2015 թվականի դեկտեմբերի 6-ին:

3. ՀՀ վարչատարածքային բաժանման մասին, ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ՝ ընդունված 2021 թվականի սեպտեմբերի 24-ին:

4. Տեղական ինքնակառավարման մասին, ՀՀ օրենք՝ ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին:

5. **ԱՄՆ ՄԶԳ**, Հայաստանի Հանրապետության ՏԻ հետազազարգացման և իշխանության ապակենտրոնացման ռազմավարական մոտեցումներ, Երևան, 2012:
6. **Բադանյան Լ. Հ.**, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Երևան, «Ձանգակ-97», 2007:
7. **Մացակյան Մ.**, Համայնքային եկամուտների պետական կարգավորման և սուբվենցիաների հարցի շուրջ, «Ֆինանսներ և էկոնոմիկա», 2009:
8. **Շահբազյան Վ.ի խմբ.**, Տեղական ինքնակառավարումը Հայաստանում, 2021թ., գիրք 10,11,12,13,14, Երևան, 2018-2022:
9. **Սուվարյան Յ. Մ.**, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, 2014:
10. **Angelopoulos Michail**, Congress of local and regional authorities, Local and regional democracy in Georgia, 2018
11. <https://www.irtek.am/views2/home.aspx?lang=hy-am> –ՀՀ Իրավական տեղեկատվական կենտրոն պաշտոնական կայքէջ
12. <https://bit.ly/3C05EvM> Տեղական ժողովրդավարության դպրոցի պաշտոնական կայքէջ
13. <https://cfoa.am/> Համայնքների ֆինանսիստների միավորում պաշտոնական կայքէջ
14. <https://minfin.am/> – ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ
15. <https://www.armstat.am/am/> - ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ
16. <http://gegharkunik.mtad.am/> ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքէջ
17. <https://gavarihamaynqapetaran.am/Pages/Home/default.aspx> Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայքէջ

ISSUES OF FINANCIAL SECURITY AND WAYS OF INCREASING THE EFFICIENCY OF USING FINANCIAL RESOURCES IN GAVAR COMMUNITY IN THE CONTEXT OF COMMUNITY CONSOLIDATION

AMIRKHANYAN SAMVEL

*PhD in Economics, Associate Professor
Head of the Management and Finance Chair, GSU
e-mail: s.amirkhanyan@gsu.am*

SARGSYAN ALLA

*2nd year Master's student of Faculty of Economics,
Finance, Monetary Circulation and Credit, GSU
e-mail: a.sargsyan@gsu.am*

Under current conditions, public administration in countries takes place through local self-government and regional government systems, and the local self-government system is not a component part of state administration.

In accordance with the provisions of the Law "On Local Self-Government" of the Republic of Armenia, a number of powers are assigned to local governments, the implementation of which implies the availability of financial resources at the primary stage, then their targeted use and evaluation of results. As for the evaluation of the financial inputs and outputs of the communities, the latter acquires special significance especially in the context of the community consolidation. It should also be noted that one of the main motivations for the expansion of communities was the increase in the efficiency of the use of financial resources, as well as the implementation of larger projects in communities with a small population, which in turn should contribute to the socio-economic development of communities. Therefore, in order to carry out a comprehensive evaluation of the consolidation process, it is necessary to consider the sources of income formation of the communities, the main spending directions, as well as the structural changes recorded in the specific weights of the latter before and after the consolidation. The object of the research is the implementation of administrative territorial reforms in Gavar community, and the subject is the financial analysis of the component elements of the community budget, the removal of obstacles to socio-economic development and the current trends.

Keywords: *Administrative territorial reforms, local self-government, municipal budget, own revenues.*

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ ФИНАНСОВОЙ БЕЗОПАСНОСТИ И ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ФИНАНСОВЫХ РЕСУРСОВ В ГАВАРЕ В УСЛОВИЯХ РАСШИРЕНИЯ СООБЩЕСТВ

АМИРХАНИЯН САМВЕЛ

*Кандидат экономических наук, доцент,
заведующий кафедрой менеджмента и финансов ГГУ*

электронная почта: s.amirkhanyan@gsu.am

САРГСЯН АЛЛА

*Магистрант 2 курса отделения финансы,
денежное обращение и кредит экономического факультета ГГУ*

электронная почта: a.sargsyan@gsu.am

В современных условиях государственное управление в странах осуществляется через системы местного самоуправления и региональной власти, причем система местного самоуправления не является составной частью государственного управления. Отметим также, что в данном контексте система местного самоуправления приобретает более высокий уровень значимости, что одновременно способствует полной реализации полномочий государства как всеобщей и единой структуры, а также, обладая близостью к конкретным проблемам конкретного сообщества, дает возможность быстрее и эффективнее реагировать на последние. В соответствии с положениями Закона РА «О местном самоуправлении» на органы местного самоуправления возложен ряд полномочий, реализация которых предполагает наличие финансовых ресурсов на начальном этапе, затем их целевое использование и оценку результатов.

Что касается оценки финансовых вложений и результатов общин, то последняя приобретает особое значение, особенно в контексте укрупнения общин. Отметим также, что одним из основных мотивов расширения сообществ стало повышение эффективности использования финансовых ресурсов, а также реализация более крупных проектов в сообществах с небольшой численностью населения, что, в свою очередь, должно способствовать социально - экономическому развитию сообществ. Поэтому для комплексной оценки процесса укрупнения необходимо рассмотреть источники формирования доходов общин, основные направления расходов, а также структурные изменения, зафиксированные в удельном весе последних до и после расширения.

Объектом исследования является реализация административно-территориальной реформы в общине Гавар, а предметом - финансовый анализ

составных элементов бюджета общины, устранение препятствий на пути социально-экономического развития и сложившиеся тенденции.

Ключевые слова: *Административно-территориальная реформа, местное самоуправление, муниципальный бюджет, собственные доходы, осуществление полномочий.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 23.06.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 30.06.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: